ՊԳ-ի 20մգ/կգ դեղաչափով ն/ո ներարկման պայմաններում կենդանիների պոչի հետձգման լատենտ ժամանակահատվածը աճել և առավելագույնի է հասել դիտարկման 60-րդ րոպեին՝ գերազանցելով ելակետային ցուցանիշը մոտ 34%-ով, իսկ 90 րոպե անց՝ 30%-ով, հաջորդիվ գրանցվել է ազդեցության նվազում, և դիտարկման 120-րդ րոպեին պոչի հետձգման լատենտ ժամանակն առանձնապես չի տարբերվել մեկնարկային արժեքից (նկ.1): Հատկանշական է, որ ուսումնասիրվող միացության ազդեցությամբ ստացված նոցիցեպցիայի մակարդակը բնութագրող ցուցանիշները գերազանցում են ոչ միայն ելակետային արժեքները, այլ նաև՝ ստուգիչ խմբում գրանցված համապատասխան ցուցանիշները: Այսպես, նոցիցեպցիայի շեմը ՊԳ-ի ներարկման 60-րդ րոպեին 20%-ով, իսկ 90-րդ րոպեին 30%-ով գերազանցում է ստուգիչ խմբի համապատասխան ցուցանիշները:



Նկար 1. PG-ի հականոցիցեպտիվ ազդեցությունը (%) Tail-flick թեստում


ՊԳԷ-ի 20մգ/կգ դեղաչափով ն/ո ներարկման պայմաններում ստացված պատկերն ուշադրության է արժանանում այն առումով, որ գրանցվում է հականոցիցեպտիվ ակտիվության ավելի արագ զարգացում, ինչի մասին է վկայում այն փաստը, որ դիտարկման արդեն իսկ 30-րդ րոպեին պոչի հետձգման լատենտ ժամանակահատվածը գերազանցում է ելակետային արժեքը մոտ 50%-ով: Ուսումնասիրվող ցուցանիշի հետագա մոնիթորինգը ցույց տվեց, որ մինչև դիտարկման 90-րդ րոպեն հետազոտվող միացությունը պահպանում է գրանցված ակտիվությունը առանց որևէ էական տեղաշարժի, որից հետո նոցիցեպցիայի շեմը սկսում է նվազել և արդեն դիտարկման 120-րդ րոպեին կազմում է 12% ելակետային արժեքի համեմատ (նկ.2): Այդ նույն գրանցման ժամանակահատվածներին համապատասխանող ցուցանիշների համեմատությունը ստուգիչ և ՊԳԷ ստացած կենդանիների

խմբերի միջև վկայում է, որ փորձարարական խմբի ցուցանիշները գերազանցում են ստուգիչ խմբի տվյալները 23%-ով՝ դիտարկման 30-րդ րոպեին և 31%-ով՝ 90-րդ րոպեին:




Նկար 2. PGE-ի հականոցիցեպտիվ ազդեցությունը (%) Tail-flick թեստում

ՊԳԳ-ի 20մգ/կգ դեղաչափով ն/ո ներարկումն ուղեկցվում է կենդանիների պոչի հետձգման լատենտ ժամանակահատվածի մեծացմամբ, որն իր առավելագույն արժեքին է հասնում դիտարկման 60-րդ րոպեին՝ գերազանցելով ելակետային ցուցանիշը 37%-ով: Հաջորդիվ թեն գրանցվում է էֆեկտի նվազման միտում, սակայն միացության հականոցիցեպտիվ ազդեցությունը պահպանվում է մինչև դիտարկման ավարտը (նկ.3): Ընդ որում ստուգիչ խմբի համեմատ այս խմբի կենդանիների մոտ հականոցիցեպտիվ ակտիվության աճի դինամիկա է նկատվում 60, 90, նույնիսկ 120-րդ րոպեներին՝ գերազանցելով ստուգիչ խմբի նշված ժամանակահատվածներին գրանցված արժեքները համապատասխանաբար՝ 17%, 21% և 25%-ով: Ավելին, ցավազրկող ազդեցության տևողությամբ ՊԳԳ-ն գերազանցում է ն՝ ՊԳ-ին, և՝ ՊԳԷ-ին, ինչի մասին է վկայում ուսումնասիրված միացությունների 120-րդ րոպեին պոչի հետձգման լատենտ ժամանակահատվածի ցուցանիշների համեմատությունը: Այսպես, եթե նշված ժամանակահատվածում ՊԳ-ի և ՊԳԷ-ի ցավազրկող ազդեցությունները գրեթե չեն տարբերվում ստուգիչ խմբի ցուցանիշից, ապա ՊԳԳ-ի գրանցած արդյունքը գերազանցում է թե՛ ստուգիչ խմբի, թե՛ ՊԳ-ի, թե՛ ՊԳԷ-ի արժեքները:



Նկար 3. PGG-ի հականոցիցեպտիվ ազդեցությունը (%) Tail-flick թեստում

Հետազոտվող միացությունների հականոցիցեպտիվ ազդեցությունը գնահատվել է նոցիցեպցիայի առավելագույն հնարավոր արժեքի տոկոսի (% ԱՀԱ) հաշվարկի միջոցով (նկ.4): Ինչպես վկայում են նկարում բերված արդյունքները, կատարված հաշվարկները ևս հաստատում են, որ ուսումնասիրված միացություններից առավել բարձր հականոցիցեպտիվ ազդեցությունը բնորոշ է ՊԳԷ-ին, իսկ ՊԳԳ-ն առանձնանում է ազդեցության երկարատևությամբ:



Նկար 4. ՊԳ-ի, ՊԳԷ-ի, ՊԳԳ-ի հականոցիցեպտիվ ազդեցության առավելագույն հնարավոր արժեքները (% ԱՀԱ)

Այսպիսով, ԳԱԿԹ-ի և պիրոգլուտամինաթթվի մնացորդներ պարունակող միացությունների շարքում նոր ցավազրկող միջոցների

փնտրտուքի նպատակով կատարված հետազոտությունները հնարավորություն տվեցին բացահայտելու հականոցիցեպտիվ ազդեցությամբ նոր միացություններ՝ պիրոգլուտամիլԳԱԿԹ, պիրոգլուտամիլԳԱԿԹ-ի էթիլ եթեր և պիրոգլուտամիլդիԳԱԿԹ, որոնք կախված կառուցվածքից ցուցաբերում են նոցիցեպցիայի շեմը տարբեր արտահայտվածության և տևողության երկարաձգելու ունակություն: Ստացված տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ նշված միացությունները կարող են դիտարկվել որպես պոտենցիալ աղբյուր նոր ցավազրկող դեղամիջոցների ստեղծման համար:

Ընդունված է 12.07.19

Антиноцицептивная активность производных ГАМК и пироглутаминовой кислоты

**Н.А. Адамян, М.Г. Баласанян, Э.С.Секоян,
С.А. Григорян, К.В. Егоян**

Исследована антиноцицептивная активность пироглутамил ГАМК, этилового эфира пироглутамил ГАМК, пироглутамил диГАМК на крысах в тесте Tail-flick. Результаты проведенных экспериментов показали, что пироглутамил ГАМК и его производные в дозе 20мг/кг при внутривентральном введении проявляют антиноцицептивную активность, на что указывает их способность увеличивать латентное время отдергивания хвоста животных при световом воздействии. Полученные данные могут явиться основой для поиска новых средств с анальгетической активностью среди производных ГАМК и глутаминовой кислоты.

Antinociceptive Activity of GABA and Pyroglutamic Acid Derivatives

**N.H. Adamyan, M.G. Balasanyan, E.S. Sekoyan,
S.H. Grigoryan, K.V. Egoyan**

The antinociceptive activity of pyroglutamyl GABA, pyroglutamyl GABA ethyl ether and pyroglutamyl diGABA was investigated on rats by Tail-flick test. Obtained results of experimental data demonstrated that intraperitoneal administration of pyroglutamyl GABA and its derivatives in a dose of 20mg/kg appear antinociceptive activity, displayed by their ability to increase the tail-flick latency of animals during light exposure. The obtained data can be the basis for the development of new agents with analgesic activity among GABA and glutamic acid derivatives.

Գրականություն

1. Овсянников В.Г., Бойченко А.Е., Алексеев В.В., Каплиев А.В., Алексеева Н.С., Котиева И.М., Шумарин А.Е. Антиноцицептивная система. Медицинский вестник Юга России, 2014, (3), с.46-54.
2. Ahuja T., Mgbako O., Katzman C., Grossman A. Phenibut (β -Phenyl- γ -aminobutyric Acid) Dependence and Management of Withdrawal: Emerging Nootropics of Abuse. Case Rep Psychiatry, 2018.
3. Allen C.A., Ivester J.R. Low-Dose Ketamine for Postoperative Pain Management, 2018, Journal of Perianesthesia Nursing, 33 (4), p. 389-398.
4. Ben-Ari Y., Gaiarsa J.L., Tyzio R., Khazipov R. GABA: A Pioneer Transmitter That Excites Immature Neurons and Generates Primitive Oscillations, Physiol Rev., 2007, Oct; 87(4): 1215–1284.
5. Carter G.T., Duong V., Ho S., Ngo K.C., Greer C.L., Weeks D.L. Side effects of commonly prescribed analgesic medications, 2014, Physical Medicine and Rehabilitation Clinics of North America, 25 (2), p. 457-470.
6. D'Amour F.E., Smith D.L., 1941, A Method for Determining Loss of Pain Sensation. J Pharmacol. Exp., Ther 72:74–79.
7. Dehkordi F.M., Kaboutari J., Zendehdel M., Javdani M. The antinociceptive effect of artemisinin on the inflammatory pain and role of GABAergic and opioidergic systems. Korean J. Pain, 2019, 32:160-167.
8. Enna S.J., McCarron K.E. The role of GABA in the mediation and perception of pain. Adv Pharmacol., 2006, 54:1-27.
9. Godugu B., Neta P., Simon-Manso Y., Stein S.E.: Effect of N-terminal glutamic acid and glutamine on fragmentation of peptide ions. J. Am. Soc. Mass. Spectrom., 2010, Jul;21(7):1169-76.
10. Koga K., Shimoyama S., Yamada A. et al. Chronic inflammatory pain induced GABAergic synaptic plasticity in the adult mouse anterior cingulate cortex. Mol Pain., 2018, 14.
11. Kreutzweiser D., Tawfic Q.A. Expanding Role of NMDA Receptor Antagonists in the Management of Pain. CNS Drugs, 2019, 33: 347.
12. Kumar A., Bachhawat A. Pyroglutamic acid: throwing light on a lightly studied metabolite. Curr. Sci., 2012, 102, 288–297.
13. Nagai J., Uesawa Y., Shimamura R., Kagaya H. Characterization of the Adverse Effects Induced by Acetaminophen and Nonsteroidal Anti-Inflammatory Drugs Based on the Analysis of the Japanese Adverse Drug Event Report Database. Clin J Pain., 2017, 33(8):667–675.
14. National Research Council(US). Guide for the Care and Use of Laboratory Animals: Eighth Edition. Washington, DC: The National Academies Press(US), 2011.
15. Pain: Current Understanding of Assessment, Management, and Treatments. Joint Commission on Accreditation of Healthcare Organizations, 2001.
16. Rajappa G.C., Vig S., Bevanaguddaiah Y., Anadaswamy T.C. Efficacy of Pregabalin as Premedication for Post-Operative Analgesia in Vaginal Hysterectomy. Anesth Pain Med., 2016, 6(3).
17. Rian W. Manville, Geoffrey W. Abbott. Gabapentin is a potent activator of KCNQ3 and KCNQ5 potassium channels. Mol Pharmacol., 2018, Oct., 94(4):1155-1163.
18. Suzuki M. Role of N-methyl-D-aspartate receptor antagonists in postoperative pain management, Curr Opin Anaesthesiol. Oct. 2009, 22(5):618–622.
19. Suzuki T., Nurrochmad A., Ozaki M., Khotib J., Nakamura A., Imai S., Shibasaki M., Yajima Y., Narita M. Effect of a selective GABA(B) receptor agonist baclofen on the mu-opioid receptor agonist-induced antinociceptive, emetic and rewarding effects, Neuropharmacology, 2005, Dec., 49(8): 1121–1131.

-
20. *Tamrat Y., Nedi T., Assefa S., Teklehaymanot T., Shibeshi W.* Anti-inflammatory and analgesic activities of solvent fractions of the leaves of *Moringa stenopetala* Bak. (Moringaceae) in mice models. *BMC Complement Altern Med.*, 2017, 17(1):473.
 21. *Viswanath O., Urits I., Jones M.R. et al.* Membrane Stabilizer Medications in the Treatment of Chronic Neuropathic Pain: a Comprehensive Review. *Curr Pain Headache Rep.*, 2019, May, 1;23(6):37.

ՀՏԴ 577.152.353 : 615.214

Մտամոլության L-արգինին կախյալ մեխանիզմները դեքսամֆետամինով մակածված երկրենո խանգարման ժամանակ

Մ.Ռ. Հովհաննիսյան

*ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտ
0014, Երևան, Պ. Սևակի փ., 5/1*

Բանալի բառեր. ազոտի օքսիդի սինթազ, արգինազ, բջջապլազմա, լեյկոցիտներ, կեղևալիմֆական համակարգ, միտոքոնդրիում, մտամոլություն

Երկրենո խանգարումը (ԵԽ) դրսևորվում է ընկճվածության, հիպոմանիայի ու մանիայի պարբերաբար կրկնվող դրվագներով, և հիվանդների 75%-ը ունեն ժառանգական նախահակվածություն [32,31]: Սթրեսը ԵԽ ռիսկի գործոն է, ու վերջին տարիներին այդ հիվանդների թիվը զգալի աճել է և կազմում է բնակչության 1%-ը [14]: Այնուամենայնիվ ԵԽ ախտաբանական մեխանիզմներն առ այսօր լիովին պարզաբանված չեն, ու հիվանդների կեսից ավելին չեն ենթարկվում ավանդական բուժման [7]: Այդ առումով հեռանկարային է ԵԽ հակադիր դրվագների հիմքում ընկած կենսաքիմիական տեղաշարժերի ուսումնասիրությունը՝ նոր թերապևտիկ թիրախներ բացահայտելու համար:

ԵԽ մտամոլության կամ մանիակային դրվագները բնութագրվում են դյուրագրգիռ վիճակով, էներգիայի աճով, քնի նվազումով, որոնք դրսևորվում են նեյրոտրանսմիսիայի պրոցեսների խթանման պայմաններում, որոնց կարգավորման մեջ, ըստ ժամանակակից պատկերացումների, մեծ դեր է խաղում ազոտի օքսիդի սինթազը (NOS) [15]: NOS-ը սինթեզում է L-արգինինից NO, որը նոր սերնդի նյարդափոխադրիչ և նյարդակարգավորիչ է և ներգրավվում է դոֆամինի, նորադրենալինի, սերոտոնինի, ադրենալինի, գլուտամատի, ասպարտատի սինթեզի և արտազատման, քայքայման և հետկլանման մեխանիզմների մեջ ու մասնակցում տրամադրության դրսևորումներին [27]: Դա թույլ է տալիս NOS-ը դիտարկել որպես հեռանկարային թերապևտիկ թիրախ աֆեկտիվ խանգարումների ժամանակ [37]: NOS-ի հետ սերտորեն կապված է արգինազը, որը մրցակցում է նույն սուբստրատի՝

արգինինի հետ և սահմանափակելով արգինինի պարունակությունը հյուսվածքներում՝ կարող է NOS-միջնորդավորված և NOS-անկախ ուղիներով մասնակցել նեյրոտրանսմիսիայի գործընթացներին [24]: Ավելին, արգինազը կարող է ներգրավվել ԵՄ ախտաբանության մեջ [21]: Սակայն այդ ուղղությամբ հետազոտությունները սակավաթիվ են և հակասական, ինչը մասնավորապես պայմանավորված է արգինազի երկու իզոմերով՝ բջջապլազմային Ա1 և միտոքոնդրիումային Ա2, որոնք ներկայացված են օրգանիզմի գրեթե բոլոր հյուսվածքներում [10] և ունեն տարբեր ֆունկցիոնալ նշանակություն:

Ներկայացված աշխատանքում ԵՄ մտամոլության փուլում հետազոտվել են արգինազի իզոմերը և նիտրերգիկ համակարգը գլխուղեղ-արյուն համակարգում առնետի դեքսամֆետամինով մակաձված ԵՄ մոդելում:

Նյութը և մեթոդները

Աշխատանքում օգտագործվել են *α*-ամֆետամին սուլֆատ (դեքսամֆետամին, AMPH) (Sigma, St. Louis, Mo.), L-արգինին·HCl, դեքստրան (Leuconostoc spp. Mr=100.000), HEPES, EDTA և “Reanal” (Հունգարիա) և “Рeаxim” (Ռուսաստան) արտադրության այլ ռեակտիվներ:

Հետազոտություններն անցկացվել են համաձայն կենդանիների հետ աշխատելու Եվրախորհրդի՝ 22.09. 2010թ. ցուցումների և ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի կենսաբժշկական էթիկայի հանձնաժողովի կանոնների: Փորձերն իրականացվել են 2-3 ամսական 150-200 գ քաշով սպիտակ արու առնետների վրա, որոնք պահվել են ինստիտուտի վիվարիումում՝ բնական լույսի, սենյակային ջերմաստիճանի պայմաններում:

Կենդանիները բաժանվել են խմբերի (n=18 առնետ/ խումբ). ստուգիչ - առողջ առնետներ, ԵՄ-առնետներ, որոնց պարբերաբար ներարկվել են AMPH-ի աճող դոզաներ՝ 2-6 մգ/կգ քաշին (18 ներարկում՝ 0.2 մլ AMPH միանվագ ներմկանային ներարկմամբ յուրաքանչյուր աշխատանքային օր, դադար հանգստյան օրերին):

AMPH-ի ներարկումների ռեժիմը՝ 2 մգ/կգ – 5 օր, 3 մգ/կգ – 4 օր, 4 մգ/կգ – 3 օր, 5 մգ/կգ – 3 օր, 6 մգ/կգ – 3 օր:

Գլխատվելուց առաջ կատարվել է վարքային բնութագրի հետազոտություն:

Ստերեոտիպային վարքը գնահատվել է ըստ համապատասխան սանդղակի [11]:

Վարքային բնութագիրը՝ շարժողական, հետազոտական, ռիսկային վարքը, գրումինգը, դեֆեկացիաները գնահատվել են բաց դաշտ և բարձրացված խաչաձև լաբիրինթոս թեստերի միջոցով [1,6]:

Կենսաբանական նյութի ստացումը: Գլխուղեղից անջատվում են նախաճակատային կեղևը, զոլավոր մարմինը, հիպոկամպը և հիպոթալամուսը, որոնք հոմոգենիզացվում են սառը 20 մՄ HEPES բուֆերում՝ 0.25 Մ սախարոզով, 2 մՄ դիթիոտրեիտով, pH 7.4 (1:10 կշիռ/ծավալ) Պոտերի հոմոգենիզատորի օգտագործմամբ (1500 պտ/ր 3 ր):

Արյան լեյկոցիտների անջատումը: Արյունը ստացվում է գլխատման ժամանակ 3.8 % $\text{Na}_2\text{C}_6\text{H}_5\text{O}_7 \cdot 5.5 \text{H}_2\text{O}$ հականակարդիչի մեջ, ավելացնում են 6 % դեքստրան ($\text{Mr}=100.000$ ՝ պատրաստված 0,9 % NaCl լուծույթում) 1:1 ծավալների հարաբերությամբ, ինկուբացնում (60 ր 37°C) ու նստեցնում են էրիթրոցիտները, ապա կատարվում է լեյկոցիտներ ու թրոմբոցիտներ պարունակող պլազմայի դեկանտացիա, որը ցենտրիֆուգում են 1000 պ/ր 5 ր, և նստվածքում անջատվում են լեյկոցիտները [4]: Լեյկոցիտները լվացվում և հոմոգենիզացվում են Պոտերի հոմոգենիզատորով (1500 պտ/ր 3 ր) 20 մՄ HEPES բուֆերում, որը պարունակում է 0.25 Մ սախարոզ, 2 մՄ դիթիոտրեիտով, pH 7.4:

Բջջապլազմայի ու միտոքոնդրիումների անջատումը նյարդային հյուսվածքներից և լեյկոցիտներից կատարվում է դիֆերենցիալ ցենտրիֆուգման եղանակով [2]:

Գլխուղեղի բաժինների հոմոգենատներից նստեցվում են կորիզները և բջջային բեկորները 3000 պտ/ր 10 ր ցենտրիֆուգմամբ, իսկ վերնստվածքը կրկին ցենտրիֆուգվում է 15000 պտ/ր 20 ր, վերնստվածքում անջատվում է բջջապլազման, նստվածքում՝ միտոքոնդրիումները, որոնք լվացվում և հոմոգենիզացվում են 20 մՄ HEPES բուֆերում՝ 0.25 Մ սախարոզով, 2 մՄ դիթիոտրեիտով, pH 7.4:

Լեյկոցիտների հոմոգենատներից նստեցվում են կորիզները և բջջային բեկորները 1200 պ/ր 10 ր 4°C ցենտրիֆուգմամբ, ստացված վերնստվածքը ցենտրիֆուգում են 11000 պ/ր 20 ր 4°C, ու անջատվում են վերնստվածքում՝ բջջապլազման, նստվածքում՝ միտոքոնդրիումները, որոնք լվացվում և հոմոգենիզացվում են 20 մՄ HEPES բուֆերում՝ 0.25 Մ սախարոզով, 2 մՄ դիթիոտրեիտով, pH 7.4:

Արգինազի ակտիվության որոշումը: Նմուշներն ինկուբացվում են 37°C 60 ր ռեակցիոն խառնուրդում՝ 20 մՄ HEPES բուֆեր, 2 մՄ դիթիոտրեիտով, pH 7.4, 0.05 Մ $\text{MnCl}_2 \cdot 4\text{H}_2\text{O}$, 0.2 Մ L-արգինին-HCl, ռեակցիան կանգնեցվում է 10 %-անոց CaCl_2 -ով, նմուշները ցենտրիֆուգվում են 15000 պ/ր, 3 ր, ու սպիտակուցազուրկ վերնստվածքում

որոշվում է L-օրնիտինի պարունակությունը, որն առաջացել է արգինազային ռեակցիայում [16]: Ջուգահեռ վերահսկման փորձերում նմուշներն ինկուբացվում են արգինազի իզոմերի ոչ սելեկտիվ արգելակիչ 60 մՄ L-վալինի առկայությամբ:

Արգինազի ակտիվությունն արտահայտվել է՝ մկմոլ L-օրնիտին/մգ սպիտակուց/ժ:

L-օրնիտինի պարունակության որոշումը կատարվում է սպիտակուցագուրկ վերնստվածքում, որին ավելացնում են 4.5 %-անոց նինհիդրին (0.5 : 1 ծավալների հարաբերությամբ), տաքացնում 90 °C 25 ր ջրային բաղնիքում և սառեցնելուց հետո կլանումը չափում են 505 նմ ալիքի երկարությամբ ընդդեմ ստուգիչի (բոլոր ռեակտիվների միևնույն նմուշը) [16]:

Օրնիտինի քանակը հաշվարկվում է L-օրնիտինի ճշգրտման կորով:

Ազոտի օքսիդի սինթազի ակտիվության որոշումը: Նմուշներն ինկուբացնում են 22 ժ 37°C ռեակցիոն խառնուրդում՝ 20 մՄ HEPES բուֆեր 2 մՄ դիթիոտրեյտոլով, pH 7.4, NOS-ի սուբստրատ՝ 0.2 Մ L-արգինին-HCl, NOS-ի կոֆակտորներ՝ 0.2 մՄ NADPH, 6 մկՄ FAD, 5.5 մկՄ FMN, 20 մկՄ (6R)-5,6,7,8-տետրահիդրո-L-բիոպտերինդիհիդրոքլորիդ [13,28]: Ջուգահեռ ստուգիչ փորձերում ռեակցիոն խառնուրդին ավելացնում են NOS-ի ոչ ընտրողական արգելակիչ՝ 5 մՄ N^G-մոնոմեթիլ-L-արգինին հիդրոքլորիդը [3]: Ռեակցիան կանգնեցվում է՝ 0.5 Մ NaOH և 10 %-անոց ZnSO₄ ավելացմամբ, նմուշները ցենտրիֆուգում են (15000 պ/ր, 3 ր), և սպիտակուցագուրկ վերնստվածքում որոշվում է նիտրիտների պարունակությունը, որն առաջացել է NOS-ի ռեակցիայում:

NOS-ի ակտիվությունն արտահայտվել է՝ նմոլ (NO₂⁻)/մգ սպիտակուց/22 ժ:

NO-ի կայուն մեթաբոլիտների պարունակության որոշումը: Սպիտակուցագուրկ վերնստվածքներին ավելացնում են Գրիս-Իլոսվայի ռեակտիվը (0.17% սուլֆանիլաթթու, 0.05 % α-նաֆտիլամին, 12.5 % քացախաթթու) 1:1 ծավալային հարաբերությամբ և կլանումը չափում են 546 նմ ալիքի երկարությամբ ընդդեմ ստուգիչի (բոլոր ռեակտիվների միևնույն նմուշը) [30]:


Նիտրիտների կոնցենտրացիան հաշվարկվում է NaNO₂-ի ճշգրտման կորով:

Սպիտակուցը որոշվել է Լոուրիի մեթոդով. քանակը հաշվարկվել է ճշգրտման կորով, և որպես չափորոշիչ ընդունվել է եզան բյուրեղային շիճուկի ալբումինը [22]:

Վիճակագրական վերլուծությունն իրականացվել է պարամետրիկ միագործոն դիսպերսիոն անալիզի (one-way Anova) և Հոլմ-Սիդակի հետդիսպերսիոն թեստի միջոցով (Sigma Stat 3.5 for Windows): Տվյալները ներկայացվել են միջին (M) $\pm$ ստանդարտ սխալի միջինը (SEM): Հավաստիության չափանիշը ընդունվել է $p < 0.05$:

Արդյունքները և քննարկումը

Աշխատանքում օգտագործվել է առնետի ԵՖ մոդել՝ հոգեխթանիչ դեքսամֆետամինի (AMPH) աստիճանաբար աճող դոզաների պարբերական ներմուծմամբ, որը համապատասխանում է մարդու ԵՖ էնդոֆենոտիպին [12,29]: Մեր փորձերում AMPH-ի ներմուծումներն առաջացնում են մտամոլությանը նման դրսևորումներ՝ գերակտիվություն, իսկ 4-6 մգ/կգ դոզաների դեպքում՝ նաև ստերեոտիպիա, որը 30-60 րոպե հետո փոխվում է գերակտիվության, իսկ 24 ժ հետո՝ ընկճվածության [25]: Մտամոլության փուլում բացահայտվել է արգինազի իզոձևերի խթանում կեղևալիմբիական համակարգի բաժիններում և արյան լեյկոցիտներում (նկ. 1): Բջջապլազմայում Ա1-ի ակտիվությունն աճում էր 5, 4.9, 6.7, 3.2 և 5.1, իսկ միտոքոնդրիումներում՝ Ա2-ը 1.4, 1.5, 2.3, 1.9 և 3.8 անգամ՝ նախաձևակատային կեղևում (ՆՃԿ), զուլավոր



Նկ. 1. Արգինազի իզոձևերի ակտիվությունը գլխուղեղի կեղևալիմբիական համակարգի բաժիններում և արյան լեյկոցիտներում՝ դեքսամֆետամինով (AMPH) մակաձված ԵՖ մտամոլության փուլում: Այստեղ և ստորև գծապատկերներում արդյունքները ներկայացվել են որպես $M \pm SEM$, $n=18$, և դրանց տարբերության հավաստիությունը (p) գնահատվել է ստուգիչի համեմատ: Հավաստիության չափանիշը՝ $p < 0.05$: # $p > 0.05$,

* $p < 0.05$, ** $p < 0.01$, *** $p < 0.001$

մարմնում (ՁՄ), հիպոկլամպում (ՀԿ), հիպոթալամում (ՀԹ) և լեյկոցիտներում, համապատասխանաբար՝ ստուգիչի համեմատ: Արդյունքում գլխուղեղում Ա1-ի ակտիվությունը գերազանցում էր Ա2-ը, ինչը կանդրադառնա ենթաբջջային նյութափոխանակության վրա, որը կրնա լինի պրոլինի և գրգռիչ ամինաթթու գլուտամատի սինթեզի ուղղությամբ օրնիտինամինոտրանֆերազի ներգրավմամբ [10]: Դա կարող է խթանել գլուտամատերգիկ տրանսմիսին՝ նպաստելով գրգռման ու գերակտիվության զարգացմանը և հանգեցնելով մտամոլության: Նշենք, որ գլուտամատը մասնակցում է ամֆետամինային շարքի հոգեխթանիչների նեյրոտրանսմիսիային և ԵՖ ախտաբանությանը [17]:


Այնուամենայնիվ, Ա2-ի ակտիվությունը խթանվում է միտոքոնդրիումներում և օրնիտինդեկարբոքսիլազի ներգրավմամբ ուղղորդում է L-օրնիտինի փոխարկումը պուտրեսցինի, ապա պոլիամինների, որոնք մասնակցում են բջիջների դիֆերենցմանը և պրոլիֆերացիային, ինչպես նաև սթրես-պատասխանին [20]: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ Ա2-ի խթանումը կարող է մասնակցել պոլիամինների մակարդակի աճին, որը ցուցադրվել է ԵՖ-ով և շիզոֆրենիայով հիվանդների գլխուղեղում (post mortem) և պլազմայում [33]: Չի բացառվում, որ Ա2-միջնորդավորված պոլիամինների սինթեզը կարող է հանգեցնել գլխուղեղում միկրո- և աստրոգլիոզի, որը զարգանում է մետամֆետամին օգտագործող թմրամոլների մոտ, որոնք և հաճախ հիվանդանում են ԵՖ-բ [36]:

AMPH-ի ներմուծման ավարտից 24 ժ հետո՝ ընկճվածության ժամանակ, Ա2-ի ակտիվությունը շարունակում է աճել ՆՃԿ-ում և ՀԿ-ում, որոնք կարևոր դեր են խաղում ԵՖ-ի ախտաբանության մեջ՝ գերազանցելով ստուգիչին 1.9 և 3.2 անգամ՝ համապատասխանաբար: Միաժամանակ դիտվում է արգինազի իզոմերների ակտիվության նվազման միտում, սակայն այն գերազանցում է ստուգիչին՝ Ա1-ը՝ 2.0, 1.4, 1.5, 2.4 և 1.7 անգամ՝ ՆՃԿ-ում, ՁՄ-ում, ՀԿ-ում, ՀԹ-ում և լեյկոցիտներում՝ համապատասխանաբար, իսկ Ա2-ը՝ միայն ՀԹ-ում՝ 1.5 անգամ, վերջինս կարգավորվում է ՁՄ-ում ու լեյկոցիտներում (նկ. 1):

Լեյկոցիտներում արգինազի իզոմերների խթանման ժամանակ Ա1-ի ակտիվությունը գերիշխում է Ա2-ի նկատմամբ և կարող է ազդել մակրոֆագերի ֆենոտիպի դրսևորմանը, քանի որ Ա1-ը բնորոշ է M2 հակաբորբոքային մակրոֆագերին, իսկ Ա2-ը՝ M1 բորբոքային մակրոֆագերին [35]: Այդպիսի հակադիր ազդեցության շնորհիվ արգինազի իզոմերները կարող են կարգավորել իմունային պատասխանը: Բացի այդ, Ա1-ը և Ա2-ը ճնշում են ախտածին մանրէների աճը, և Ա1-ը նեյտրոֆիլներում ցուցաբերում է հակասնկային ակտիվություն [26]: Դա

նույնպես կարող է նվազեցնել գերակտիվացած իմունային պատասխանը:

Հստ կուտակված տվյալների՝ NOS-ի բոլոր իզոմերները մասնակցում են ԵՄ-ի ախտաբանությանը, և դրանց էքսպրեսիան և ակտիվությունը փոփոխվում են ԵՄ հիվանդների մոտ բջջապլազմայում և միտոքոնդրիումներում [27]: Դրանից ելնելով՝ մեր աշխատանքում հետազոտվել է NOS-ի ընդհանուր ակտիվությունը: Նկար 2-ում երևում է, որ մտամոլության փուլում խթանվում է և NOS-ը, որի ընդհանուր ակտիվությունն աճում է գլխուղեղի հյուսվածքների բջջապլազմայում՝ միաժամանակ կրկնակի խթանվելով լեյկոցիտների բջջաբաղադրամասերում:



Նկ. 2. Ազոտի օքսիդի սինթազի ենթաբջջային ակտիվությունը գլխուղեղի կեղևալիմբիկական համակարգի բաժիններում և արյան լեյկոցիտներում՝ դեքսամֆետամինով (AMPH) մակաձված ԵՄ մտամոլության փուլում

NOS-ի ընդհանուր ակտիվությունը խթանվում է ՆՃԿ-ի, ՋՄ-ի, ՀԿ-ի և ՀԹ-ի բջջապլազմայում՝ 2.3, 2.6, 3.1 և 2.1 անգամ, իսկ ՆՃԿ-ի և ՋՄ-ի միտոքոնդրիումներում թեթևակի նվազում էր 1.6 և 1.3 անգամ, ստուգիչի համեմատ, համապատասխանաբար, և չէր փոփոխվում ՀԿ-ում և ՀԹ-ում: Հենց բջջապլազմային NOS-ը հիմնական դեր է խաղում հասուն նեյրոնների միտոքոնդրիումներից կալցիումի արտազատման ժամանակ, ինչը նպաստում է նեյրոտրանսմիտերների արտազատմանը վիզիկուլներից սինապտիկ ճեղք: Նիտրերգիկ համակարգը կարող է նաև խթանել կալցիում կախյալ գրգռման գործընթացները ագեոլիլտլինի, cGMP-ի միջոցով [15]: Այսպիսով, NOS-ի և արգինազի միաժամանակյա խթանումը, ներգրավելով վերը նշված նյութափոխանակության տեղաշարժերը, այդ թվում՝ գլուտամատերգիկ/NO ուղին, կարող է մասնակցել ԵՄ-ի մտամոլության գործընթացներին:

Մեր փորձերի ընթացքում՝ 24 ժ հետո՝ ընկճվածության ժամա-

նակ, արգինազի իզոմերների ակտիվության նվազմանը զուգահեռ (ինչը նշվել է վերևում), նվազում է նաև NOS-ի ակտիվությունը՝ ՆՃԿ-ի, ՋՄ-ի, ՀԿ-ի, ՀԹ-ի և լեյկոցիտների բջջապլազմայում՝ 1.6, 2.4, 1.5, 1.9 և 3.1 և միտոքոնդրիումներում՝ 1.9, 1.9, 2.1, 2.3 և 2.9 անգամ, ստուգիչի համեմատ, համապատասխանաբար (նկ. 2): Այդ նվազումը մասնավորապես կարող է պայմանավորվել արգինազի և NOS-ի փոխադարձ արգելակմամբ: Արգինազը ճնշում է NOS-ի ակտիվությունը՝ սահմանափակելով NOS-ի սուբստրատի՝ արգինինի պարունակությունը, որը միաժամանակ անհրաժեշտ է NOS-ի հիմնական կոֆակտոր տետրահիդրոբիոպտերինի (BH4) սինթեզի համար: Ցուցադրվել է, որ L-արգինինի սննդային հավելումը բարձրացնում է BH4-ի մակարդակը առնետի էնդոթելային բջիջներում [18]: L-արգինինը և BH4-ը անհրաժեշտ են NOS-ի մոնոմերների ակտիվ դիմերների հավաքի, ինչպես նաև ֆերմենտի կառուցվածքի, կոնֆորմացիայի և կատալիտիկ ակտիվության համար [5]: Բացի այդ, արգինազն առաջացնում է միզանյութ, որը նույնպես խոչընդոտում է iNOS-ի մոնոմերներից ակտիվ դիմերների ձևավորումը [23]: Ցուցադրվել է նաև NOS/NO-ի արտադրության արգելակում գլխուղեղի միտոքոնդրիումներում Ա2-ի կողմից [34]: Ա2-ը պոլիամինների միջնորդությամբ արգելակում է iNOS-ի տրանսլյացիան ու NO-ի գերարտադրությունը [9]: NOS-ը իր հերթին կարող է ճնշել արգինազի ակտիվությունն առաջին միջանկյալ արգասիքի՝ N^G -հիդրօքսի-L-արգինինի միջոցով, որը արգինազի իզոմերների հզոր արգելակիչ է [8]:

Ուշագրավ է, որ արգինազը, նվազեցնելով արգինինի և BH4-ի մակարդակը, կարող է ճնշել մոնոամինային նյարդափոխադրիչների կենսասինթեզը, քանի որ BH4-ը արոմատիկ ամինաթթուների՝ տրիպտոֆան-, թիրոզինի և հիդրօքսիլազների հիմնական կոֆակտորն է [19]: Դա կարող է իր դերը խաղալ մտամոլությունից ընկճվածության անցնելու գործընթացում:

Այսպիսով, մտամոլության փուլում առաջին անգամ դեքսամֆետամինով մակաձված ԵՄ-ի ժամանակ բացահայտվել է արգինազի իզոմերների և NOS-ի խթանում կեղևալիմբիական համակարգի բաժիններում, որն ակտիվացնում է մտամոլության հիմքում ընկած մոլեկուլային մեխանիզմները: Այդ ֆերմենտային համակարգերի խթանումը դիտվում է և՛ արյան լեյկոցիտների բջջապլազմայում, և՛ միտոքոնդրիումներում՝ ներգրավվելով իմունային պատասխանի խթանման և ԵՄ-ի հոգեմոլունային մեխանիզմներում: Ելնելով վերը նշվածից՝ հետա-նկարային է արգինազի և NOS-ի հետագա հետազոտությունը կլինիկայում՝ որպես թերապևտիկ թիրախ աֆեկտիվ հիվանդությունների ժամանակ:

Ընդունված է 19.07.19

L-аргинин-зависимые механизмы мании при дексамфетамин-индуцированном биполярном расстройстве

М. Р. Оганнисян

Впервые выявлено значительное повышение активности изоформ аргиназы и цитоплазматической синтазы оксида азота в регионах кортико-лимбической системы в маниакальной фазе дексамфетамин-индуцированного биполярного расстройства, что стимулирует молекулярные механизмы маниакального поведения. Стимулирование активности вышеуказанных ферментов в цитоплазме и митохондриях лейкоцитов крови активирует иммунный ответ, включаясь в психоиммунные механизмы биполярного расстройства. Полученные результаты указывают на перспективность дальнейшего изучения аргиназы и NOS для использования в качестве терапевтических мишеней при аффективных расстройствах.

L-Arginine-dependent Mechanisms in Mania Following Dexamphetamine-Induced Bipolar Disorder

M. R. Hovhannisyan

For the first time, a significant increase in the activity of arginase isoforms and cytoplasmic nitric oxide synthase is revealed in the regions of corticolimbic system in the manic phase of dexamphetamine-induced bipolar disorder, suggesting the involvement of these enzymes in the molecular mechanisms underlying mania. These enzymes are activated also in the cytoplasm and mitochondria of blood leukocytes, and stimulating immune response may be involved in the psychoimmune processes in bipolar disorder. The results obtained offer the prospects of the further study the arginase and NOS for use as therapeutic targets in affective disorders.

Գրականություն

1. Буреш Я., Бурешова О., Хьюстон П. Методики и основные эксперименты по изучению мозга и поведения. М., 1991.
2. Дижс Г.П., Ещенко Н.Д., Дижс А.А., Красовская И.Е. Введение в технику биохимического эксперимента. СПб., 2003.
3. Проскуряков С.Я., Конопляников А.Г., Скворцов В.Г. и др. Структура и активность ингибиторов NO-синтаз, специфичных к L-аргинин связывающему центру. Биохимия, 2005, 70 (1), с.14–32.
4. Фрик Г., Прейснер З.С., Иенсен Г.Л., Бурмейстер Ю. В кн.: Иммунологические методы (под ред. Х. Фримеля), М., 1979.

5. Alderton W.K., Cooper C.E., Knowles R.G. Nitric oxide synthases: structure, function and inhibition. *Biochem. J.*, 2001, 357, 593–615.
6. Augustsson H., Meyerson B. Exploration and risk assessment: a comparative study of male house mice (*Mus musculus*) and two laboratory strains. *Physiol. Behav.* 2004, 81 (4), 685–698.
7. Blanco C., Compton W.M., Saha T.D. *et al.* Epidemiology of DSM-5 bipolar I disorder: results from the National epidemiologic survey on alcohol and related conditions—III. *J. Psychiatr. Res.*, 2017, (84), p.310–317.
8. Boucher J.L., Moali C., Tenu J.P. Nitric oxide biosynthesis, nitric oxide synthase inhibitors and arginase competition for L-arginine utilization. *Cell Mol. Life Sci.* 1999, 55, (8-9), 1015–1028.
9. Bussiere F.I., Chaturvedi R., Cheng Y. *et al.* Spermine causes loss of innate immune response to *Helicobacter pylori* by inhibition of inducible nitric oxide synthase translation. *J. Biol. Chem.*, 2005, 280, 2409–2412.
10. Cederbaum S.D., Yu H., Grody W.W. *et al.* *Mol. Genet. Metab.*, 2004, 81 (1), 38–44.
11. Costall B., Nylor R., Olley J. The substantia nigra and stereotyped behavior. *Eur. J. Pharmacol.*, 1972, 18, p.95–106.
12. Einat H., Shaldubina A., Bersudsky Y., Belmaker R.H. Prospects for the Development of Animal Models for the Study of Bipolar Disorder. p. 19-31. In *Bipolar disorders: basic mechanisms and therapeutic implications*—2nd ed./edited by J.C. Soares, A.H. Young. Informa Healthcare USA, Inc. New York, London, 2007, 1–420.
13. Gagnon C., Leblond F.A., Filep J.G. Peroxynitrite production by human neutrophils, monocytes, lymphocytes challenged by lipopolysaccharide. *FEBS Lett.*, 1998, 431 (1), 107–110.
14. Geddes J.R., Miklowitz D.J. Treatment of bipolar disorder. *Lancet*, 2013; 381: 1672–1682.
15. Ghasemi M., Claunich J., Niu K. Pathologic role of nitrergic neurotransmission in mood disorders. *Prog Neurobiol.* 2018, 173, 54-87.
16. Iyamu E.W., Asakura T., Woods G.W. A colorimetric microplate assay method for high throughput analysis of arginase activity in vitro. *Anal. Biochem.* 2008, 383 (2), 332–334.
17. Kim Y., Santos R., Gage F., Marchetto M.C. Molecular Mechanisms of Bipolar Disorder: Progress Made and Future Challenges. *Frontiers in Cellular Neuroscience.* 2017, 11, 30-41.
18. Kohli R., Meininger C.J., Haynes T.E. *et al.* Dietary L-arginine supplementation enhances endothelial nitric oxide synthesis in streptozotocin induced diabetic rats. *J. Nutr.*, 2004 (134), 600–608.
19. Kudlow P., Cha D.S., Carvalho A.F., McIntyre R.S. Nitric oxide and major depressive disorder: pathophysiology and treatment implications. *Curr. Mol. Med.*, 2016, 16, 206–215.
20. Limon A., Mamdani F., Hjelm B.E. *et al.* Targets of polyamine dysregulation in major depression and suicide: Activity-dependent feedback, excitability, and neurotransmission. *Neuroscience and biobehavioral reviews*, 2016, 66, 80-91.
21. Liu P., Jing Y., Collie N.D. Altered brain arginine metabolism in schizophrenia. *Translational Psychiatry.*, 2016, 6 (8), 871–881.
22. Lowry O.H., Rosebrough N.J., Farr A.L., Randall R.J. Protein measurement with the Folin phenol reagent. *J. Biol. Chem.*, 1951, 193, 265–275.
23. Moeslinger T., Friedl R., Volf I., Brunner M. *et al.* Urea induces macrophages proliferation by inhibition of inducible nitric oxide synthesis. *Kidney Int.*, 1999, 56 (2), 581–588.
24. Morris S.M.Jr. Arginases and arginine deficiency syndromes. *Curr. Opin. Clin. Nutr. Metab. Care.*, 2012, 15 (1), 64–70.
25. Movsesyan H.A., Alchujyan N.Kh., Aghababova A.A. *et al.*, Effects of d-amphetamine on the regional activity of arginase isoforms in the rat corticolimbic brain. *Ученые записки ЕГУ, Химия и Биология/ Proceedings of the YSU, Chemistry and biology*, 2016, 3, с. 40-47.

26. *Munder M.* Arginase: an emerging key player in the mammalian immune system. *British J. Pharmacol.*, 2009, 158, 638–651.
27. *Philippu A.*, Nitric Oxide: A Universal Modulator of Brain Function, *Curr. Med. Chem.*, 2016, 23 (24), 2643.
28. *Radi R.* Peroxynitrite, a Stealthy Biological Oxidant. *The Journal of Biological Chemistry.*, 2013, 288 (37), 26464–26472.
29. *Robinson T.E., Camp D.M.* Long-lasting effects of escalating doses of d-amphetamine on brain monoamines, amphetamine-induced stereotyped behavior and spontaneous nocturnal locomotion. *Pharmacol. Biochem. Behav.*, 1987, 26 (4), 821–827.
30. *Schmidt H.H.H.W., Kelm M.* Determination of nitrite and nitrate by the Griess reaction. In: *Feelisch M., Stamler J.S.*, eds. *Methods in Nitric Oxide Research*. Wiley, Chichester., 1996, 491–497.
31. *Soares J.C., Young A.H.*, Bipolar disorders: basic mechanisms and therapeutic implications. 2nd ed/ Eds., *Medical Psychiatry* / 35, 2007, Informa Healthcare USA, Inc.
32. *Sullivan P.F., Daly M.J., O'Donovan M.* Genetic architectures of psychiatric disorders: the emerging picture and its implications. *Nat Rev Genet*, 2012, 13: 537–551.
33. *Svinarev V.I., Syatkin S.P., Frolov V.A. et al.* The role of polyamines in etiopathogenesis of schizophrenia. Springer Wien New York. *Amino Acids*. 2007, 33, 43–48.
34. *Tate D.J.Jr., Vonderhaar D.J., Caldas Y.A. et al.* Effect of arginase II on L-arginine depletion and cell growth in murine cell lines of renal cell carcinoma. *J. Hematol. Oncol.*, 2008 (1), 14–19.
35. *Timosenko E., Hadjinicolaou A.V., Cerundolo V.* Modulation of cancer-specific immune responses by amino acid degrading enzymes *Immunotherapy*. 2017, 9 (1), 83–97.
36. *Tong J., Fitzmaurice P., Furukawa Y. et al.* Is brain gliosis a characteristic of chronic methamphetamine use in the human? *Neurobiol Dis*. 2014, 67, 107–118.
37. *Zhou Q.G., Zhu X.H., Nemes A.D., Zhu D.Y.* Neuronal nitric oxide synthase and affective disorders. *IBRO reports.*, 2018, 5, 116–132.

УДК 577.1+618.11-006+618.14-006

Changes in Glutathione Activity in Pathophysiology of Reproductive Organs Cancers

G. A. Hovhannisyan

*H. Buniatian Institute of Biochemistry NAS RA
5/1 P. Sevag str., 0014, Yerevan, RA*

Keywords: glutathione, gynecological cancer, antioxidant defense, oxidative stress

It is an established fact that oxidative stress, caused by an imbalance between prooxidants (such as reactive oxygen species (ROS)) and antioxidants, plays an important role in carcinogenesis of reproductive organs' cancer. Many studies have investigated the presence of antioxidants and their transcripts in the female reproductive tract indicating that the balance between ROS and antioxidants greatly influences the reproductive activities in females, such as endometrial changes in different luteal phases, folliculogenesis, ovulation, fertilization, placental growth, embryogenesis, and implantation [20]. Thus, antioxidants are critical for maintaining the redox balance in the ovaries and uterus to support normal reproductive function. However, their exact molecular mechanisms and roles during carcinogenesis have not been fully elucidated yet.

GSH is considered the major representative of nonenzymatic antioxidants present in oocytes, embryos [20] and uterus as well. GSH is involved in many cellular functions, including cell proliferation, differentiation, and apoptosis [20]. The studies on ovarian physiology have shown that the increase in steroid production in the growing follicle causes an increase in P450, resulting in ROS formation. Follicular ROS promotes apoptosis, whereas GSH and follicular stimulating hormone (FSH) counter balance this action in the growing follicle [1]. However, high intracellular GSH levels are important contributors to pathologies such as, cellular transformation and resistance to radiation and antineoplastic treatments in cancer cells [15, 18].

Many antineoplastic agents, in particular the alkylating agents, are designed to modify DNA and react with electrophilic sites. Glutathione therefore is thought to intercept and inactivate these agents before they can act to kill the cancer cell. Furthermore, GSH is known to mediate resistance to both cisplatin and carboplatin through several mechanisms such as drug uptake reduction and increased intracellular drug detoxification/ inactivation increased DNA repair and inhibition of apoptosis drug-induced oxidative stress [5]. Specifically in ovarian cancer, although with some controversy, several reports

already associated high GSH levels or glutathione S-transferase P1 (GSTP1) activity with cisplatin or carboplatin resistance. High levels of GSH are required in well-oxygenated normal tissue to protect the cells against oxidative stress, since competing reactions of GSH are very rapid. This suggests that low to moderate decrease in GSH contents will have little effect on the radiosensitivity and chemosensitivity of normal cells. In contrast, under low oxygen tensions (hypoxia), such as those that are frequently seen in tumor tissues, GSH may play a dominant protective role. Therefore, depletion of GSH in the hypoxic tumor tissues will make them more susceptible to radiotherapy and chemotherapy [5]. Thus, in the context of altering the tumor microenvironment a systematic understanding of GSH fluctuations pattern, as a major non enzymatic antioxidant in reproductive organs, is required.

Recently, we have shown that changes in Ca^{2+} /calmodulin-dependent protein phosphatase calcineurin (CN) activity in the pathophysiology of ovarian and uterine cancer depends on the stage of the disease [8, 12]. Expression and activity of CN are modulated by intracellular redox status. GSH has been shown to promote CN phosphatase activity [2]. Therefore, taking into account all of above mentioned, in this study, we have considered advisable to investigate also the changes in GSH activity in plasma and tumor tissue samples of previously untreated patients with primary ovarian and uterine cancer depending on the stage of disease.

Material and Methods

Sample collection and preparation. The blood and tissue samples from postoperative material of untreated patients with the I (n=6), II (n=7) and III (n=5) stages of primary ovarian cancer and I (n=17), II (n=8) and III (n=8) stages of primary uterine adenocarcinoma were provided by the National Centre of Oncology after V.A. Fanarjyan (NCO MH RA). The plasma of healthy donors (n=6) and histologically checked healthy parts of remote tissue (n=8 for uterine and n=4 for ovaries) were used as a control. The protocol was approved by the Research-related Ethics Committee of the H. Buniatian Institute of Biochemistry NAS RA (IRB0001621, IORG 0009782, Ref. let. #5). Histological study of the postoperative material was conducted by the Laboratory of Clinical Pathomorphology at the NCO MH RA. The most cases of ovarian cancer were diagnosed as a moderately and poorly differentiated adenocarcinoma. Age of patients ranged from 45-80, and the average age was 61 years. In case of uterine carcinoma, moderately differentiated endometrioid adenocarcinoma was diagnosed mostly. Age of patients ranged from 35-76, and the average age was 61 years as well.

Blood (1.5-2 ml) was collected into sodium citrate (3.2%)-coated vacutainer tubes and centrifugated at 1500 rpm for 10 min. Plasma was separated and stored at -32°C . Tissue samples were homogenized with 5

volumes of 50 mM Tris-HCl, pH 7.5 buffer, containing 0.05% Triton-X-100, 0.1 mM EDTA, 1 mM dithiothreitol (DTT), protease inhibitors, and centrifugated at 20000×g for 60 min at 4°C. The supernatant was separated and stored at -32°C as well.

The protein content in samples was determined by Bradford assay [4].

Glutathione activity. The activity of GSH was studied using DTNB/GR enzyme recycling method [16]. GSH is oxidized by 5,5-dithiobis-(2-nitrobenzoic acid) (DTNB) resulting in the formation of GSSG and 5-thio-2-nitrobenzoic acid (TNB). GSSG is then reduced to GSH by glutathione reductase using reducing equivalent provided by NADPH. The rate of TNB formation is proportional to the sum of GSH and GSSG present in the sample and is determined by measuring the formation of TNB at 412 nm using LABLine-022 microplate reader (LABLINE Diagnostics, Austria).

Statistical analysis. Experiments were performed at least three times. The results were expressed as the means $\pm$ SEM. Statistical analyses were performed using Origin 6.1 software. Statistical significance was defined at $p < 0.05$ and was determined with one-way ANOVA.

Results and Discussion

Results obtained revealed that plasma GSH activity of the both ovarian and endometrial cancer patients changed in a parallel manner (Fig. a, b). It was demonstrated dramatic 2.9 fold and 2.8 fold decreases in ovarian and uterine cancer patients respectively, for the I stage of disease compared with the control groups. The significant increase was found in the II (2.4 fold and 4.7 fold, respectively) and III stages of disease (5.6 fold and 5.2 fold, respectively) compared with the I stage. In uterus tumor tissue GSH activity demonstrated the same picture as in plasma. We have found statistically significant 2.3 fold decrease in the I stage of disease compared with the control group (Fig. a). In




Fig. GSH activity in plasma and tumor tissue of the primary uterine (a) and ovarian (b) cancer patients with the I, II and III stages of disease. * $p < 0.05$; ** $p < 0.01$ for the I stage compared with control, and for the II and III stages compared with the I stage (one-way ANOVA)

the II and III stages of disease it demonstrated 1.7 fold and 2 fold increases respectively, compared with the I stage. As one can see from Fig.1b, in ovarian tumor tissue GSH activity was shown to be decreased in parallel with the stages of disease: 1.3 fold in the I stage of disease compared with the control and 2.4 fold and 4.6 fold in the II and III stages of disease, respectively, compared with the I stage.

Glutathione is a ubiquitous tripeptide that functions as an important intracellular radical scavenger. It protects cells against ROS, as well as against many toxins, mutagens, and drugs [11]. Recent studies have demonstrated that GSH levels are elevated in various human cancer tissues including breast and ovary, as compared with normal tissue in these regions. It was reported that elevated GSH levels in tumor tissue are associated with resistance to chemotherapy [13].

It is well known that tumor milieu is enriched with ROS with their huge impact on cancer initiation and progression [8]. However, in cancer cells, ROS is held at low to moderate levels to induce cell proliferation and cell survival, and to avoid high level induced cell damage and at an excessive level induced cell death [9]. Being the major intracellular antioxidant, GSH could undergo a sharp depletion for the initial stages of cancer progression as a major adapting factor for cancer cells to regulate and limit oxidative stress. Furthermore, the gradual increase of the GSH activity in the II and III stages of disease could be explained by the recovery of GSH recycling and recovering systems, mainly by glutathione reductase (GR). GR is considered as a central enzyme of cellular antioxidant defense, as it catalyzes the reduction of oxidized glutathione disulfide (GSSG) to the sulfhydryl form, glutathione. Recently Ana Todorović et al. have shown that compared to patients with polyps and myoma, levels of GR protein and GR mRNA were elevated in women with both hyperplasia and adenocarcinoma [17]. It is known that many types of treatment resistant malignant tumors are characterized by the increased expression of enzymes involved in the GSH metabolism [3]. Thus, indirectly, our results also pointed out the possible therapy resistance of uterine adenocarcinoma, as the high level of GSH was previously recorded in some radio- or chemoresistant cancers, such as breast tumor, melanoma, and lung cancer [17].

The finding that stage dependent changes of GSH activity in plasma and tumor tissue of the ovarian cancer patients was not parallel, probably, indicates existence of difference in schemes of regulation. Fluctuations of FSH expression and activity along with the differences in stage dependent changes between levels of systematic circulating estrogen and its local counterparts is among factors that most probably could explain obtained data. It is well documented that in ovaries FSH interacts with estrogen to regulate the synthesis of GSH [6]. Moreover, level of circulating FSH in women of postmenopausal age is quite elevated [19], which is in consistent with our data regarding GSH plasma levels in ovarian cancer.

More recently, we have shown that CN activity in plasma and tumor tissue of patients with primary ovarian and uterine cancer changes depending on the tumor stage of the disease [8, 12]. CN widely involved in signaling pathways of the immune response and cancer [7, 14]. GSH is known to protect disulfide bonds of CN from ROS attacks via reduction of oxidized ones and, thus, protect CN from inactivation [10]. There is need for additional studies to explain the finding that changes in CN and GSH activities in reproductive organs cancer were not parallel.

In conclusion, in this study we have shown that GSH activity in gynecological cancers changes depending on the stage of disease.

Acknowledgment

The study was supported by the State Committee of Science, Ministry of Education and Science, RA in the frame of the project #16A1f10. We thank to National Center of Oncology, Ministry of Healthcare RA, particularly the Laboratory of Clinical Pathomorphology (head S. Davtyan), for the provided oncological samples.

Accepted on 31.07.19

Գլուտաթիոնի ակտիվության փոփոխությունը վերարտադրողական օրգանների քաղցկեղի պաթոֆիզիոլոգիայում

Գ. Ա. Հովհաննիսյան

Վերջերս ցույց ենք տվել $\text{Ca}^{2+}/\text{CaM}$ -կախյալ պրոտեին ֆոսֆատազ կալցինեյրինի (CN) ներգրավվածությունը ձվարանների և արգանդի քաղցկեղի պաթոֆիզիոլոգիայում և պարզել ենք, որ քաղցկեղով հիվանդների պլազմայի և ուռուցքային հյուսվածքներում CN-ի ակտիվության փոփոխությունները կախված են հիվանդության փուլից: CN-ի էքսպրեսիան և ակտիվությունը պայմանավորված են ներբջջային օքսիդավերականգնողական կարգավիճակով: Ցույց է տրվել, որ գլուտաթիոնը (GSH), որը բջջի հիմնական հակաօքսիդանտներից է, նպաստում է CN-ի ֆոսֆատազային ակտիվությանը: Բացի այդ, GSH-ը սերտորեն կապված է գինեկոլոգիական քաղցկեղի բուժման հիմնական մեթոդների հանդեպ քիմիո-և ռադիոկայունության դրսևորման հետ: Այս աշխատանքում ուսումնասիրել ենք GSH-ի ակտիվության փոփոխությունը ձվարանների և արգանդի առաջնային քաղցկեղով չբուժված հիվանդների պլազմայում և ուռուցքային հյուսվածքում: Արդյունքները

